

ՕՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ ԼԵՋՈՒԻ ԵՒ ՈԳՈՒ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Օտարագրութեան ծննդեան հետ միաժամանակ գրական երկի ազգային պատկանելութեան խնդիրները միշտ մեզ մօտ վիճարկուել եւ վիճարկում են առանձին սրութեամբ:

Լեզուի առաջնայնութիւնից զատ՝ մոր փաստարկումների հիմք են ծառայել նաեւ գրական միւթի նախընտրութեան գործօնը, գրողի ծագումնի պարտադիր պայմանը, նրա ապրած կամ բացած «ոգու» զարթօնքը, մախնիների կանչը, օտար աշխարհին գրի՝ ուժով ներկայանալու հայ միջավայրի փառատեսիլ ցնծութիւնը եւ այլ մանր ու մեծ հանգամանքներ, որոնք հայ գրական միտքը մինչեւ այսօր մղում են օտարալեզու գրական հարուստ արտադրանքը հայ գրականութեան մաս դիտելու անդուլ փափաքին: Դա երբեմն շօշափում է առարկայական հայրենասիրութեան երակը, հպարտութեան եւ փառասիրութեան որոշ ենթաշերտեր:

Բայց երեւոյթը արդարամտօրէն քննելիս հարց է առաջանում. արդեօ՞ք լեզուն միայն «մարմինն է», «հանդերձը», արդեօ՞ք այն պարտադրաբար կամ վերուստ ստորադաս է «ոգու» ցոլքին: Ի վերջոյ, ի՞նչ բան է բացարձակի մղուող «հայու» ոգին, հայի «հալածական ոգին», ինչպէս կ'ասէր անզուգական Վահան Թէքեանը:

Սփիւռքահայ եւ հայրենի գրականագիտական միտքը տասնեակ տարիներ, եւ նաեւ այսօր, աշխուժօրէն վիճարկում է, թէ ի՞նչ դիտել «մերոնց» օտարագիր գրականութիւնը, ո՞րն է ազգային գրականութեան դիմորոշ յատկանիշը, ի՞նչ ասել է «հայ գրականութիւն» առհասարակ:

Երեւոյթի զգացական դաշտը, պէտք է ասել, բաւական խճճեց խենթերի երգիչ, անուղղայ լաւատես Ուիլեամ Սարոյեանը՝ հարցին հաղորդելով ազգային փառագոյ, բայց, ըստ էութեան, առարկայական փայլ՝ վերարծարծելով միւթին հակադրուող «ոգու» խորախորհուրդ երկնամեծ կառուցուածքը, որի խնդիրները քննում էր: Ու. Սարոյեանը յայտարարում էր. «Լեզուն, որով գրում եմ, անզլերէնն է, միջավայրը, որ նկարագրում եմ, ամերիկեան է, բայց ոգին, որ մղում է ինձ գրելու՝ հայկական է: Ուրեմն ես հայ գրող եմ եւ պատկանում եմ հայ գրողների ընտանիքին»¹:

1 Ուիլեամ Սարոյեան, Ընտիր երկեր չորս հատորով, հ. 1, Եր., 1986, էջ 6:

Սա միայն *Ու. Սարոյեանի* տուրքը չէր հայ գրողների ընտանիքին, ուր նրան գուրգուրում էին, հպարտանում խօսքի սրութեամբ ու ազգային արմատի առաջնայնութեան կտրուկ ասուած փաստով:

Ու. Սարոյեանը չէր կարող չտեսնել իր խօսքի պատճառով «նեղ» կացութիւնը, որի մէջ գցել էր իրեն ամերիկեան լեզուական միջավայրի պարզ համադրութեան լոյսի տակ: Չէ՞ որ ինքը 20-րդ դարի կէսերի ամերիկեան գրականութեան հսկաներից է եւ շուտով գտնում է ենթակայական այս երկուութեան բանալին՝ որպէս նետուած «խօսքի» հոգեբանական արդարացում հայ ժողովրդի ու հայ անհատի ընդվզումի իրաւունքի խորքերում:

Աւելի ուշ «ես» փորձագրութեան մէջ նա փորձում է բացատրել իրեն «հայ գրող համարելու» իւրօրինակ վճիռը՝ ընդունելով խնդրի ենթակայութիւնը, ընդգծելով մակերեսի վրայ գտնուող պատմական ու հայրենասիրական նախահիմքերը. «Թէեւ անգլերէն եմ գրում, թէեւ Ամերիկայում եմ ծնունդ ու ամերիկացի եմ, բայց ես ինձ հայ գրող եմ տեսնում: Եթէ աշխարհը գրկում է մեզ հայրենի հողից, մենք մեզ հայրենի հող ենք դարձնում աշխարհը: Եթէ աշխարհը գրկում է մեզ մեր իշխանութիւնից, մենք մեզ իշխանութիւն կարգում ենք ինքնիշխան մեր ոգին»¹:

Հրաշալի է ասուած: Գրողն է մեր առջեւ՝ իր ենթակայական դիրքորոշումով:

Նրա խօսքերում շեշտադրուած է «հայ ոգին» հայ պահելու պատասխանատուութիւնը, որն ունի մայրենին մայրական կաթի հետ կորցրած *Ու. Սարոյեան* ամերիկեան գրողը: Սակայն նրա որդին այլեւս կարող է չունենալ «ոգու բեռի» գիտակցութիւնը, կարող է կորցնել այն ժիշդ այնպէս, ինչպէս նախնեաց լեզուն մանկութեւ կորցրել էր հայրը: Իսկ հայրերի ու որդիների աւանդական բախումը այս ելագծով, յայտնի փաստ է, իւրովի են ապրել Ուիլեամն ու նրա Արամ որդին:

Մեր կարծիքով, լեզուի եւ ոգու այս բախումի առիթով առերեսութեւ հաշտարար, բայց ծշմարիտ ելք է սահմանել Սփիւքի գրականութեան հանրագիտակ Մինաս Թէօլէօեանը՝ յստակ ուրուագծելով գրողի տեղը. «*Ու. Սարոյեանի գրականութիւնը, թէեւ հայ գրականութիւն չէ, սակայն Սարոյեան հայ է գրականութեան մէջ*»²: Մ. Թէօլէօեանը կարծես հետեւողական չէ այս կարգի ընդհանուր գնահատութիւններում, երբ, օրինակ, գտնում է, թէ լեզուն միայն միջոց է, իսկ գրականութեան մէջ «հայութիւնը կ'իրագործուի նաեւ - ու առնուազն - շունչով եւ ոգիով»³: Եւ, ըստ էութեան, այդպէս է բացատրում *Սարոյեան* երեւոյթը՝ թէ հայ է իր գրուածքներում:

1 Նոյնը, Պատմութեան, հարցազրոյցներ, էսէներ, յուշեր, եր., Նաիրի, 1999, էջ 7:

2 Մինաս Թէօլէօեան, Դար մը գրականութիւն, հ. Բ., Նիւ Եորք, 1982, էջ 22-23:

3 Նոյն տեղում, էջ 18:

Ի հարկէ, ազգային ոգեղէն կոչմակը աշխարհառօնակ *Ու. Սարոյեանին* ուղեկցել է, կողմնորոշել, բնութագրել, սակայն դա չէր կարող ամբողջովին կամ մասնակի փոխարինել նախնեաց գրական ընտանիքի «ամցագրին»։ Նիւթի լաւագոյն աղբիւրն իր համար մնում է գրողական սեփական փորձը։

Մեր համոզումով, ազգային գրականութեան պատմութեան լաւագոյն սահմանապահը եղել եւ մնում է լեզուն, քանի որ գրականութեան ծանաչողութեան առաջին հիմքը լեզուարտայայտչական մտածողութիւնն է, որի մէջ կարելի է որսալ գրի բուն ակունքը՝ մտքի ու ոգու ժշմարիտ աւազանը։

Այս հարցում հարկ է մասնաւորել նաեւ *Յակոբ Օշականի* եզակի դիրքորոշումը, որի համար գեղարուեստական բնագիւղը գլուղի անձից դուրս, բացարձակ վիճակ է, անգամ՝ «*լեզուէն վեր ոյժ մը*»։ Ուստի, ըստ նրա, միանշանակօրէն դժուար է լեզուն դիտել այս կամ այն երկի ազգային պատկանելութեան նախահիմք։ Ուշագրաւ է *Մ. Թէօլէօլեանի* եւ *Յ. Օշականի* մտեցումների տարբերութիւնը. վերջինիս, օրինակ, չի հետաքրքրում հայ հեղինակի լեզուական ատաղձը, նա առաջին հերթին փնտռում է «... *էջէն, գրութեան անդին՝ ապրումը, հոգին, մարդը, զգայնութիւնը։ Եւ ցեղը անշուշտ։ Հետեւանքը՝ «ներսինի» այս գերարժեւորման՝ լեզուէն բացարձակ անկախութիւնը, որով անգլերէն գրութեան վէպ մը կը դառնայ «հայ գրականութիւն»*»։

Եւ ո՞րն է իր՝ գրականութեան մեկնիչի խնդիրը. *Յ. Օշականի* կարծիքով բանալ «...*մեզի հասած էջ մը... ու զայն ենթարկել «հոգեխօսական սա վերլուծումին»։ Այդ ծանապարհով կարելի է մտնել «այդ թաքուն ծորումներուն ոչ միայն ալքերը, այլեւ երակները»*»։

Մենք համաձայն ենք, որ լեզուն նախապայման չէ գրողի մեծութիւնը եւ ապրումի գոյութիւնը որոշելիս։ Սակայն գրականութեան ազգային սահմանները կապ չունեն գրողի իրական մեծութեան հետ։ Այստեղ է շփոթը։

Յ. Օշականը չի խօսում գրականութեան՝ օտար լեզուով տարբաժանման կամ դա անտեսելու պայմանի մասին։ Կարելորդ ստեղծագործութեան ուժգնութեան մէջ ցեղային յատկանիշի վերբերումն է։ Երկի «*ոգու*» ներգործութեան խնդիրը նա բացարձակացնում է գրեթէ *Ու. Սարոյեանի* նման, ինչը չի կարելի ժշմարտութեան վերջին երաշխիք անուանել, մանաւանդ՝ գիտութեան մէջ։

Քննութեան մէջ *Յ. Օշականը*, մեր դիտարկումով, գիտութեան դաշտում չէ. նա խօսում է բնագրի ընկալման եղանակների մասին, այսինքն՝ գտնում է գրողի եւ ընթերցողի շահերի արանքում, ժիշդ կը լինի ասել՝ հանդէս է գալիս իբրեւ գրողին «*մրցակից*» ընթերցող։ Բառը ապրումի կամ ներապրումի «*ժմշման տակ*» դառնում է ածանցեալ։ *Յ. Օշականը* գործածում է աւելի կիրթ

1 Յակոբ Օշական, «*Սփիւքը եւ իրաւ բանաստեղծութիւնը*», Երուսաղէմ, 1945, էջ 17-18։

2 Նոյն տեղում, էջ 18։

արտայայտութիւն՝ գեղարուեստական բնագրի «... բառը փոշի է»¹: Հաւանաբար, նկատի ունի բառիմաստի այլաբանական ծանրութիւնը, որ մթագնում է նրա առարկայական նշանակութիւնը, «փոշիացնում», երկրորդական դարձնում այն: Բնականաբար, նրա համար այլեւս հեշտ է անցումը բառից լեզուին եւ արդէն «լեզուէն անդին»:

Իսկ օրինակը չի ուշանում. *Լ. - 2. Սիւրմէլեանի* գրի ծանաջողութեան հարցում կեանքի մայրամուտին *Յ. Օշականը* ցուցաբերում է ենթակայական, «չմարսուած» մօտեցում՝ անվերապահօրէն ընդունելով, թէ «... *2. Սիւրմէլեանի գիրը* (իմա՝ «*Ձեզ եմ դիմում, տիկնայ՛ք եւ պարոնայ՛ք*» - Ս. Դ.) կը պատկանի հայ գրականութեան»²:

Պատահական չէ, որ այդ ծանապարհը ֆրանսահայ գրականագէտ *Գրիգոր Պըլտեանի* համար բանուկ է: Վերջինիս ձեւակերպումը, *Յ. Օշականի* համեմատութեամբ, աւելի մեղմ է. մէջբերելով յիշեալ եւ համանման հատուածներ եւ կողմնորոշուելով դէպի իր առաջադրութիւնը՝ նա լեզուին յատկացնում է «միջնորդի» դեր, որը, ըստ էութեան, *Յ. Օշականի* տեսական «տարազին» լծակից է: Նա գտնում է, որ գեղարուեստական բնագրի մէջ ամէն ինչ ենթարկւում է «...իմաստային տիրապետութեան, ուր լեզուն միջնորդն է, օժանդակը, բայց, ի վերջոյ, ոչ անհրաժեշտը»³: Այս ելագծից յետոյ գիտնականի համար արդէն հեշտ է կողմնորոշուել դէպի բնագրի՝ բովանդակութեան յենքով պատկանելութեան նախապատուութիւնը՝ «օժանդակ», այսինքն՝ ածանցեալ ծանաչելով գեղարուեստական բնագրի լեզուն:

Այս ծանապարհի վտանգաւորութիւնը նոյն «ոգու» տիրապետութեան բացարձակացման փորձն է, որի շնորհիւ հայ նիւթի գրական արծարծումը արդէն այդ գրականութեան փաստն է դառնում՝ գրողի հայ կամ օտար լինելուց անկախ:

«Ոգին», մեր խորին հանգումով, առաջնահերթ նախապայման չէ ազգային գրողի պատկանելութիւնը ծանաչելու խնդրում, ինչը նման տեսակէտի կողմնակիցները, տարանջատելով մտածողութեան լեզուական նախահիմքից, առայսօր փորձում են գերադասել ազգային քննութագրումի համար:

Այլապէս այդ «ոգին» կարող է յայտնաբերուել ամենուր, անգամ՝ ծագումով օտար գրողների մօտ, ինչպիսիք, օրինակ, *Կուրտ Վոնեգուտն* է (ԱՄՆ), *Պէյո Եատրովը* (Բուլղարիա), ռուս հեղինակներ *Օսիպ Մանդելշտամը*, *Վասիլի Գրոսմանը*, *Անդրէյ Բիտովը*, հայկական նիւթով երկու վէպերի հեղինակ *Գոնսալօ Գուարչը* (Իսպանիա), որին, ի դէպ, դիտում են առհասարակ ազգային հակամարտութիւնների գծով գեղարուեստական լաւագոյն մեկնաբանը նորագոյն շրջանում:

1 Մինաս Թէօլեօեան, նշվ. աշխատ., էջ 32:

2 «Յառաջ», Փարիզ, 1947, 6-19 Ապրիլ:

3 Պըլտեան Գրիգոր, Տրամ, Պէյրութ, 1980, էջ 20:

Ընդ որում՝ բառական «չարչրկուած» *Ֆրանց Վերֆէլը*, ի դէպ, շարունակում է մնալ հայ եւ օտար հեղինակների մէջ չգերազանցուած արձակագիրը ցեղասպանութեան ու հեռոսամարտի նիւթերի գեղարուեստական կատարելութեան առումով: Սա բերում է նաեւ տխուր հետեւութեան. մեր հայագիր թէ օտարագիր գրողներից քչերին է յաջողուել ապահովել որակական բարձր յատկանիշ այն երկերում, որտեղ գեղարուեստական քննութեան է ենթարկուել 1915-ի մղձաւանջը: Երբեք հետ բարձր մրցակցութեան ելած «օտարները» որոշ դէպքերում գերազանցել են՝ դուրս գալով ողբերգութեան զգացական յորձանքից:

Լեզուի ենթահողի վրայ գրական տարբաժանումների առթիւ հայրենի գրականագէտներից *Վարդան Փարթամեանը* շտապում էր «ուղղել» չափանիշները՝ ձեւակերպելով օտարագրութիւնը իբրեւ հայ գրականութեան փաստ՝ ծննդաբանական գործօնի թելադրութեամբ: Նա իր խօսքը փորձում էր հիմնաւորել պարզ «տրամաբանութեամբ», թէ օտարագիրների ջոկատը, «...պատմական հանգամանքներով պայմանաւորուած», «մտնում է սփիւռքահայ գրականութեան մէջ»՝ «հայապահպանութեան գործին նպաստող իր նշանակալի մասնակցութեամբ»¹:

Այսինքն՝ գաղափարը, նպատակներից ամնուազն մէկը, որը հայապահպան նշանառութիւն պիտի ունենայ, գրականագէտի տպաւորութեամբ, ուղղորդում է դէպի գրական պատկանելութեան հիմնախնդիրը, մի բան, որ չի դիմանում տրամաբանական քննութեան:

Իսկ ահա հայրենի մէկ այլ գրականագէտ՝ *Դաւիթ Գասպարեանը*, հանրակրթական դպրոցի համար գրուած ձեռնարկում, բախտելով լեզուի եւ գրական նիւթի երկուութեան խնդրին, թուում է՝ բաւարարում է լեզուից դուրս «ոգու» յայտնաբերման «միջին» ցուցանիշով, որը, ըստ էութեան, խժողում է բերում պահպանելով հակադիր բեւեռների միջեւ մթամած անորոշութիւն: Դրա արդիւնքում նա ստիպուած է ընդունել երկու եզրերի գոյութեան «*հրաւումը*»՝ կարծ ծանապարհով հանգրուան գտնելով «*հայանպաստ*» թուացող տարածքներում. «*Ազգային ոգու առկայութիւնը եւ հայ գրական ընտանիքին պատկանելու ցանկութիւնը*, - գրում է նա, - բաւարար նախադրեալ են՝ ասելու, որ օտարագիր հայ գրողներից շատերի երկերը պատկանում են նաեւ հայ գեղարուեստական մտքին: Թէեւ ազգային գրականութեան առաջնահերթ նախապայմանը մայրենի լեզուն է, բայց պատմական ճակատագրով իր հայրենիքից տարագրուած հայութեան համար այդ գրականութիւնը պէտք է համարել ազգային գրականութեան մաս»²: Այսպիսի կեցուածքի տակ ոչ միայն երկու

1 «Զննդատական տարեգիրք - 85», եր., «Սովետական գրող», 1985, էջ 192:

2 Դաւիթ Գասպարեան, Ժեննա Զալանթարեան, Հայ գրականութիւն. նորագոյն շրջան, դասագիրք հանրակրթական աւագ դպրոցի աւարտական դասարանի համար, եր.,

իրարամերժ սկզբունքների բռնի «գոյակցութեան» հետ քննադատի հաշտուողականութիւնն է, այլեւ վաղուայ թե՛ բախումների հանդէպ մէկ սկզբունք որդեգրելու նրա անկարողութիւնը:

Դասագրքի հեղինակը յորդորում է աշակերտութեանը՝ «անհրաժեշտ է հոգեբանօրէն հաշտուել»¹ նրանց՝ օտարագիրների բնաբուխ ցանկութեանը, ինչ կայ որ, թող որ ձգտեն ամրանալ հայ գրականութեան երակին: Եթէ միայն ցանկանում են, դա ուրեմն, ըստ նրա, բաւարար նախադրեալ է:

Ի դէպ, նոյն հայեցողական տրամաբանութեամբ էր ժամանակին առաջնորդուել նաեւ *Յակոբ Կարապետեանը Ու. Սարոյեանի* պարագային²: Ցաւն այն է, որ լեզուն նախապայման համարելով հանդերձ, չհաշտուելով նախապայմանի դէմ «ոտնձգութիւններին»՝ մեր գրականագէտների մի որոշ մասի մօտ նկատուում է որոշակի «հոգեբանական հաշտուողականութիւն» լեզուի կորստեան դիմաց հայ գրականութեան սահմանների արհեստական ընդլայնման գաղափարի հետ:

Եւ նորից նոյն հարցումը. արդեօ՞ք այդքան ածանցեալ է գրականութեան մէջ լեզուի պարագան, այն գեղարուեստական ատաղձը, որ հայագիր չէ, մի՞թէ կարող է յաւակնել հաւասարարժէք ազգային գրական յուշարձանի կամ փաստի: Այդպէս դատելով՝ վրացագիր կամ թուրքագիր *Սայաթ - Նովան* նոյնչափ հայ գրականութեան մաս պիտի կազմի, որքան հայագիր *Սայաթ - Նովան*: Սակայն արդեօ՞ք այդպէս է:

Ինչ վերաբերում է ամերիկահայ արձակագիր *Յակոբ Կարապետեան*ի, նշենք, որ ութսունականների վերջում գրում է «Կանաչ աքսոր» ծրագրային յօդուածը, ուր փորձում էր ծշղել օտարագրութեան սահմանները: Այս ասալարեզուն նա դժգոհութիւն է յայտնում ամերիկեան գրականութեան մէջ հայ հեղինակների ստեղծագործութեան մակարդակից. «Սակայն տակաւին վստահ չեմ, - գրում է նա ցաւով,- թէ նրանք պիտի կարողանան հայկական հուն բանալ ամերիկեան

«Լոյս», 1993, էջ 337:

1 Նոյն տեղում:

2 *Յ. Կարապետեանը* ջանադրաբար փորձում էր բացառութեան «փաթեթ» կազմել *Ու. Սարոյեանի* համար, եւ ծիգն ակնյայտ է. այսինքն՝ *սարոյեանական* խօսքը նրա եւ շատերի համար այլեւս անքննելի է: Դուրս է գալիս, որ եթէ հեղինակը հզօր է, ուրեմն հայ գրող է, եթէ իրեն նա հայ հեղինակների շարքն է դասում, ուրեմն նա է՝ ծշմարիտը: Ահա այստեղից էլ՝ հաճելի «բացառութիւնը». «Մինչ այժմ, - գրում է նա, - միակ բացառութիւնը Սարոյեանն է, որը, ամերիկեան գրող լինելով հանդերձ, մնում է հայ գրող, որովհետեւ ինքը հրապարակաւ կատարեց այդ յայտարարութիւնը: Ով որ իրեն հայ է նկատում, ուրեմն հայ է» (*Յակոբ Կարապետեան*, Երկու աշխարհ, Ութերթաւուն, 1992, էջ 134):

3. *Կարապետեանի* սխալը բացառութեան հետ մեզ յայտնի ժամանակատր հաշտութիւնն է: Եւ ընդհանուր դրոյթներով չի էլ թաքցնում, որ գիտի ծշմարիտ պատասխանը, այն, որ Սփիւռքում օտար լեզուով հայ գրականութիւն զարգանալ չի կարող. «Պատմութիւնը միշտ էլ ժխտական պատասխան է տուել: Ամերիկայում էլ նոյնն է սպասում մեզ» (Նոյն տեղում):

գրականութեան մէջ, ինչպէս օրինակ հրեաները: Մենք հիմա ամէն տեղ ենք, ներկայութիւն ենք, սակայն դեռ ինքնութիւն չենք»¹: Եւ նա իրաւացի է:

«Ամերիկայում կան իրլանդացի գրողներ, բայց ոչ իրլանդական գրականութիւն: Ամերիկայում կան հրեայ գրողներ, բայց ոչ հրեայ գրականութիւն:... Հիմա Ամերիկայում հիմնաքարերն են դրում անգլիագիր հայ գրողների, բայց ոչ ամերիկահայ (նկատի ունի ծագումով հայ ամերիկեան օտարագիր գրողներին – Ս. Դ.) գրականութեան: Վերջին հաշուով, լաւագոյն գրողները մասն են կազմելու ամերիկեան գրականութեան, իսկ միջակները շարունակելու են մնալ պատմե՜շի վրայ՝ ապաւինելով իրենց նախնիքների ողբերգական պատմութեանը»²:

Յիրաւի, երիցս ժիշդ է Յ. Կարապետեանը. օտարագիր գրողների «նիւթական շահագրգռութիւնները»՝ հայկական ողբերգական պատմութիւնները, խանգարելու են գեղարուեստական արժեւորման օրինաչափ ճանաչման փորձերին՝ համաշխարհային գրական չափանիշների համեմատութեան լոյսի տակ:

Ամերիկահայ արձակագիր Յակոբ Ասատուրեանը իրաւունք ունէր կենքի մայրամուտին կտրուկ ոճով, բայց երկար ստեղծագործական կենսափորձի թելադրութեամբ յայտարարելու, թէ օտարագրութիւնը «...Աւարայրին դաշտին վրայ սուրը վար նետել յանձնուելու հրաւէր»³ է: «Եթէ իսկ Սփիւռքին 99 տոկոսը արդէն դադրած է հայերէն գիրք ու թերթ կարդալէ, այնուամենայնիւ ան (իմա՝ ինքը – Ս. Դ.) կը յամառի գրել մնացած մէկ տոկոսին համար»⁴, քանի որ «...ալ ի՞նչ կը մնայ հայ դատ ու դատաստանէն, ալ որո՞ւ հաշտոյն զայն «օտարին պիտի ծանօթացնենք», երբ մանաւանդ բարեմիտ նոյն գրողին իսկ դատումովը՝ արդէն ...«կորստա՞ծ դատ մըն է»⁵:

Ե՛րիշ է նկատուել, որ օտարագիր հեղինակը նման է կերպարուեստի այն ժանրի հետեւորդին, որի նկարներում ականայ բացակայում է գունային բազմապիսութիւնը, եւ նա ստիպուած է բաւարարուել սեւ ու սպիտակի խաղով:

Լեզուն գեղարուեստական ստեղծագործութեան գոյնն է, ոճաւորման անկրկնելի ներկայանակը:

1 Յակոբ Կարապետեան, Երկու աշխարհ, էջ 132:

2 Նոյն տեղում, էջ 134:

3 Յակոբ Ասատուրեան, Տօ, լամ տմաւեր, Նիւ Եորք, 1986, էջ 7:

4 Նոյն տեղում, էջ 8:

5 Նոյն տեղում, էջ 7: